

**ԱՆՁՆԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՄԲ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ԴԱՍԱԿԱՆ
ՊԱՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հողվածում ներկայացված են անձնային կողմնորոշմամբ ուսուցման կիրառմամբ դասական պարի դասավանդման առանձնահատկությունները: Ընդգծվում է ապագա բավետի արտիստի անձնային զարգացման առաջնությունն ու կարևորությունը: Դիտարկվում է դասական պարի դասավանդման գործընթացում պարարվեստի ուսումնական հաստատությունների սաների նկատմամբ անհատական մոտեցման դրսևորման անհրաժեշտությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ.

Պարարվեստ, անձնային կողմնորոշմամբ ուսուցում, դասական պար, անձնային զարգացում:

Դասական պարարվեստում պարի և երաժշտության անբաժանելի միասնությունը որոշում է արվեստի այս տեսակի անկրկնելի յուրօրինակությունը, որը դասական պարը վերածում է ավարտուն ձևի՝ ձգտող աուտենտիկ կատարելության:

Պարարվեստի ուսումնական հաստատություններում մանկավարժական կոլեկտիվի առջև դրված է արտիստի ստեղծագործ անհատականության կերտման դժվարին խնդիրը: Այդ իսկ պատճառով, պարարվեստի բնագավառում առավել նպատակահարմար է անձնային կողմնորոշում ունեցող ուսուցման մեթոդների և հնարքների կիրառումը:

Անձնային կողմնորոշմամբ ուսուցումը կոչված է օգնել մարդուն սեփական անձի կերտման, սեփական դիրքորոշման որոշման գործում, ուղենիշային արժեքների ընտրության, գիտելիքների որոշակի պաշարի յուրացման, հե-

տաքրքրող գիտական և գործնական խնդիրների շրջանակակի բացահայտման, դրանց լուծման միջոցների յուրացման, սեփական «Ես»-ի բացահայտման և այն կառավարելու գործում:

Անձնային կողմնորոշում ունեցող ուսուցումն ուշադրության կենտրոնում է պահում երեխայի ինքնությունը, արժեքային համակարգը, ուսումնառության գործընթացի սուբյեկտիվությունը:

Մանկավարժական աշխատություններում, որոնք նվիրված են այս տեսակ ուսուցման խնդիրներին, այն հիմնականում հակադրվում է ավանդական ուսուցմանը՝ նպատակադրված ուսուցման արդյունքում հասնելու որոշակի սոցիալական գործառույթների և դպրոցի սոցիալական պատվերում ամրագրված վարքագծի որոշակի մոդելների «իրացմանը»:

Անձնային կողմնորոշում ունեցող ուսուցումը որպես ուսուցման ինքնանպատակ ուսումնասիրում է մարդու անհատական գոյության մեխանիզմները՝ պատասխանատվությունը, ռեֆլեքսիան, ինքնավարությունը, որոնց հասնելուն են ուղղված ուսուցման բովանդակային և ընթացակարգային բաղկացուցիչները: Այս մոտեցման պարագայում առարկայական բովանդակության յուրացման արդյունավետությունը աճում է շնորհիվ այն բանի, որ այժմ ձեռք է բերում որակապես նոր անձնային իմաստ, հանդես է գալիս որպես անհատի անձնային փորձի բովանդակություն և կայացման միջավայր: [1]

Անձնային կողմնորոշմամբ մոտեցման սկզբունքներով կազմակերպված պարապմունքը, ի տարբերություն ավանդականի, առաջին հերթին փոխում

է «ուսուցիչ-աշակերտ» փոխհարաբերությունների տեսակը: Հրամայական ոճից մանկավարժը անցնում է համագործակցության, կողմնորոշվում է ոչ այնքան արդյունքների վերլուծությանը, որքան աշակերտի ընթացակարգային գործունեությանը: Փոփոխվում են աշակերտի գործառույթները՝ պատշաճ կատարումից դեպի ակտիվ ստեղծագործական աշխատանք:

Այսպիսով, անձնային կողմնորոշում ունեցող ուսուցումը ուսուցման գործընթացի կենտրոնում դնում է երեխայի անձը: Դա սովորողի անձի հաջող զարգացման, նրա բնածին հնարավորությունների իրացման նախապայման է հանդիսանում: Տվյալ իրավիճակում սովորողի անձը հանդես է գալիս առաջնային սուբյեկտի դերում: Դեռ մեծ ռուս գրող և մանկավարժ Լ.Ն.Տոլստոյը երեխայի ազատությունը համարում էր ուսուցման հիմնական սկզբունքներից մեկը: Նրա կարծիքով, դպրոցը հումանիստական կարող է լինել միայն այն ժամանակ, երբ ուսուցիչը չդիտարկի այն որպես «կարգապահ զինվորների վաշտ, որի հրամանատարն այսօր մեկն է, իսկ վաղը՝ մյուսը»: Նա կոչ էր անում ուսուցչի և սովորողների միջև նոր տեսակի հարաբերությունների հաստատմանը՝ բացառող պարտադրանքը, պաշտպանում էր անհատի զարգացման գաղափարը՝ որպես հումանիստական մանկավարժության կենտրոնական գաղափար:

Հետևաբար, անձնային կողմնորոշում ունեցող մոտեցումն իր առջև դնում է երեխայի ստեղծագործ և բազմակողմանի զարգացման նպատակ և կրում է հումանիստական բնույթ:

Դասական պարի ուսուցումն ունի իր առանձնահատկությունները: Առանձնակի կարևորվում է բալետի ապագա արտիստի անձնային զարգացումը: Ապագա պարողի ֆիզիկական զարգացումը, որի համար պատասխանատու է դասավանդող մանկավարժը, ներառում է նաև հոգևոր, բարոյական և գեղար-

վեստական բաղկադուցիչներ: Այդ իսկ պատճառով, աշակերտի, նրա ծնողների, ընկերներների հետ շփումներն ու գրույցները շատ արդյունավետ կարող են լինել: Մանկավարժական գործողությունը, այսպիսով, սովորողին դնում է ֆիզիկական և հոգևոր շարժման մեջ, խթան է հանդիսանում նրա շարունակական անխափան զարգացման համար:[2] Քանի որ դասական պարը պարարվեստի յուրացման գլխավոր առարկան է հանդիսանում, ապա հենց դասական պար դասավանդողին է պատկանում ոչ միայն բարձր արհեստավարժություն ունեցող բալետի արտիստի, այլև զարգացած անհատի կերտման կարևորագույն դերը: Տվյալ դեպքում, նման ուսուցումը, բացի բարձր որակավորման մասնագետի պատրաստումից, կապահովի նաև սովորողների անձնային զարգացումը, յուրաքանչյուր աշակերտի կամ ուսանողի անհատականության կայացումը:

Դասական պարի դասաժամին ուսումնա-դաստիարակչական գործընթացը պետք է կրի ստեղծագործական բնույթ: Մանկավարժն իր գործունեության մեջ պետք է համատեղի մշտապես հումանիստական դիրքորոշում ունեցող ուսուցչի և դաստիարակի գործառույթները:[3] Դասական պարի ուսուցման սկզբնական փուլում դասաժամի ընթացքում առավել կարևոր դեր է խաղում դաստիարակությունը: Բալետի դահլիճում աշակերտների վերաբերմունքը մեկը մյուսի հանդեպ, փոխադարձ հարգանքը, սովորողների արձագանքը համադասարանցիների սխալներին կամ հաջողություններին՝ այս ամենը պետք է դաստիարակվի մանկավարժի կողմից դասաժամի ընթացքում:

Հարկ է նշել, որ պարարվեստի ուսուցումն ունի առանձնահատուկ ներուժ, որը կարող է դիտարկվել ոչ միայն ուսուցման և դաստիարակության տեսանկյուններից, այլև պարային ուսումնական հաստատությունների սովորողների անձնային հատկությունների զարգացման տեսանկյունից:

Ձևավորելով արվեստի աշխարհին պատկանող մարդու անձը, որը ելնելով իր մասնագիտության առանձնահատկություններից կոչված է մտնելու այլ անձանց հետ բազմակողմանի զարգացող փոխազդեցության մեջ, հնարավոր չէ չհենվել նրան ի սկզբանե հատուկ անհատական հատկանիշների վրա, որոնց հաշվի չառնելու դեպքում ստեղծագործական ինքնագարգացումն ու ինքնաիրացումը կիջնեն լավ մշակված մեխանիկական գործառնությունների մակարդակի:

Դասական պարի ուսուցման գործընթացում առկա են գեղարվեստական-էսթետիկ ուսուցմանը բնորոշ բոլոր գծերը, որոնք զարգացնում են զգայական ոլորտը, գեղարվեստական ճաշակը, անհատի էթիկական դիրքորոշումները: Անձնային կողմնորոշում ունեցող մանկավարժությունն աջակցություն է առաջարկում յուրաքանչյուր անհատի էսթետիկ գիտակցության հնարավորությունների բացահայտման հարցում:^[4] Բարձր դասական արվեստի օրինականներին կողմնորոշվելու պարագայում սովորողը ձեռք է բերում ինքնաարտահայտման նոր, առավել կատարելագործված միջոցներ, հարստացնում է իր կոմունիկատիվ ոլորտը: Գեղարվեստական կրթությանն ընդհանուր առմամբ և պարարվեստի ենթահամակարգին մասնավորապես արդեն իսկ բնորոշ է անձի անհատականացված էսթետիկ ինքնագարգացմանը նպաստելու տենդենցը: Այլ կերպ ասած, մանկավարժական ենթակառուցվածքի տվյալ բնագավառը բնական կերպով իրականացնում է ինչպես սովորողների, այնպես էլ մանկավարժական կադրերի ընտրություն՝ ելնելով վերջիններիս անձնային հատկանիշներից:

Անձնային կողմնորոշմամբ մոտեցման հիման վրա իրացվող մանկավարժական տեխնոլոգիաների համակարգում, սովորողներին իրենց ընդունակությունների բացահայտման հնարավորություն տալու նպատակով, անհրաժեշտ է պահպանել մի շարք պայ-

մաններ: Կարևորվում է մանկավարժական շփումը դրական ուշադրության հիման վրա, մանկավարժից պահանջվում է սովորողներին ընդունել այնպիսին, ինչպիսին որ նրանք կան՝ առանց գովասանքի կամ նախատիքի, յուրաքանչյուրին վերաբերվել որպես սեփական արժեքներ կրող անհատականության: Բացառիկ նշանակություն ունի մանկավարժների կողմից աշակերտների ներաշխարհը հասկանալու ունակությունը, ապրումակցումը և նույն հատկանիշների սերմանումը սովորողների շրջանում:

Անձնային կողմնորոշում ունեցող մոտեցումը սահմանում է, որ մանկավարժական գործընթացի կենտրոնում գտնվում է ինքը սովորողը, և ուսուցումն ու դաստիարակումը պետք է կառուցվեն վերջինիս շարժառիթներին, հետաքրքրություններին, հոգեբանական խնդիրներին (որոնք հարկավոր է հարգալից կերպով շտկել) համապատասխան:^[1] Աշակերտների հետաքրքրություններին և հնարավորություններին համապատասխան, մանկավարժը սահմանում է յուրաքանչյուր կոնկրետ պարապմունքի նպատակն ու անելիքները, և ձգտում է խմբի մակարդակը համապատասխանեցնել առանձին վերցրած սովորողի մակարդակին: Այսպիսով, անձնային կողմնորոշում ունեցող մոտեցման սկզբունքներին համապատասխան կազմակերպված յուրաքանչյուր պարապմունքի նպատակը որոշվում է ամեն մի առանձին վերցրած աշակերտի և ընդհանուր խմբի դիրքորոշումներից ելնելով: Այս ամենը ենթադրում է յուրաքանչյուր աշակերտի անձնային հատկանիշների բազմակողմանի ուսումնասիրություն: Փաստորեն, անձնային կողմնորոշում ունեցող մոտեցումը մանկավարժական կոլեկտիվի առաջ դնում է հետազոտական բնույթի բարդ խնդիրներ, որոնց լուծմանը հնարավոր չէ հասնել առանց մանկավարժական, հոգեբանական և սոցիոլոգիական գիտությունների մեթոդներին հենվելու: Մանկավարժի դե-

րը անձնային կողմնորոշմամբ ուսուցման իրացման պարագայում առավել բարդ է, քան այլ մանկավարժական մոտեցումների պարագայում: Մանկավարժին անհրաժեշտ են ավելի շատ ժամանակ և ուշադրություն, գիտելիքներ և հմտություններ, սակայն այս դեպքում զգալիորեն ավելի մեծ է նաև արդյունքը: Իսկ ինչն ամենակարևորն է՝ սովորողը տեսնում և զգում է հատուկ, շահագրգռված և հարգալից վերաբերմունք իր նկատմամբ, որն արագորեն վերաճում է մանկավարժների հանդեպ անկեղծ վստահության և ընկերության:

Անձնային կողմնորոշում ունեցող մոտեցումը յուրաքանչյուր աշակերտին օժանդակություն է առաջարկում իրեն որպես ամբողջական անհատականություն գիտակցելու, նրա ընդունակությունների որոշման և բացահայտման, ինքնուրույն ընտրված կյանքի ճանա-

պարհի ունիկալ դիրքորոշման ձևավորման և իրացման հարցում:

Անձնային կողմնորոշում ունեցող մոտեցումը ժողովրդավարական հումանիստական փոխհարաբերությունների, մանկավարժական երկխոսության գոյության, մարդու հասուն ինքնագիտակցության կայացման օբյեկտիվ հիմքերից է: Այլ կերպ ասած, հումանիստական մանկավարժությունը չի կարող չհենվել անձնային կողմնորոշում ունեցող ուսուցման տեսական սկզբունքներն ու մեթոդներին:

Դասական պարի ուսուցումն իրենից ներկայացնում է երկարատև և քրտնաջան ստեղծագործական գործընթաց: Դա պատասխանատու աշխատանք է, որը միաժամանակ պահանջում է ժամանակակից մանկավարժից և՛ տեսական գիտելիքներ, և՛ դաստիարակչական արվեստի հմտություններ:

Չրականություն

1. В.В. Сериков Личностно ориентированное образование,– М:–1998, с. 5, 29
2. Д. Зайферт Педагогика и психология танца, Заметки хореографа: Учебное пособие/Пер. с нем. В. Штакенберга. – СПб.–Издательство «Лань»; Издательство «Планета Музыки», 2012.– с. 10 – 11
3. Л.Л. Бочкарев Психология музыкальной деятельности . М.: Классика–XXI, 2006. с. 220
4. Б.Г. Ананьев Задачи психологии искусства. // Художественное творчество. 1982. с. 236

ЛИЧНОСТНО–ОРИЕНТИРОВАННЫЙ ПОДХОД В СФЕРЕ ПРЕПОДАВАНИЯ КЛАССИЧЕСКОГО ТАНЦА

АНДРАНИК САРГСЯН

*Преподаватель Ереванского государственного колледжа танцевального искусства МО РА.
Художественный руководитель танцевальной группы «Аракс».*

В статье представлена специфика освоения классического танца с применением личностно–ориентированного подхода обучения. Отмечается приоритетность и важность личностного роста будущего танцора и артиста балета. Рассматривается необходимость индивидуального подхода в преподавании классического танца у учащихся хореографических учебных заведений.

PERSONALITY–ORIENTED APPROACH IN CLASSICAL DANCE TEACHING

ANDRANIK SARGSYAN

The article describes the specifics of the development of classical dance with student–centered learning approach. It noted the priority and importance of the personal growth of the future ballet dancer. There was emphasized the necessity of individual approach in teaching classical dance of student of choreographic schools.